ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՊՁԲ-19/4» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 14 մարտի 2019թ.

ժամը՝ 12:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Հասմիկ Գևորգյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Նելլի Աբովյան

Հանձնաժողովի գնահատող անդամներ՝ Հայկ Հովհաննիսյան, Արայիկ Հակոբյան

1. «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՊՁԲ-19/4» ծածկագրով ընթացակարգի N 24 և N59 չափաբաժինների մասով գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման մասին.

1.1 «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՊՁԲ-19/4» ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնման ընթացակարգի հրավերը և հայտարարությունը 01.03.2019թ. հրապարակվել է www.apmeps.am կայքում, ինչպես նաև www.gnumner.am կայքում:

1.2 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը բացվել են 2019 թվականի մարտի 11-ին, Ժամը՝ 11:00-ին apmeps համակարգի միջոցով: ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կարիքների համար 2019թ.-ի ընթացքում դեղորայքի ձեռքբերման նպատակով՝ գնանշման հարցման միջոցով էլեկտրոնային ձևով կազմակերպված «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՊՁԲ-19/4» ծածկագրով ընթացակարգի 12 մարտի ժամը՝ 11:00-ի բացման նիստում հանձնաժողովը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 40-րդ կետի 5)-րդ ենթակետով, թիվ 2 արձանագրությամբ որոշեց՝ N24 և N59 չափաբաժինների մասով նիստը կասեցնել, ինչպես նաև «Լեյկո» ՍՊԸ-ին և «Ռիխտեր Լամբրոն»ՀՁ ՍՊԸ-ին հրավիրել գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների, քանի որ N24 չափաբաժնի մասով «Լեյկո»ՍՊԸ-ն, իսկ N59 չափաբաժնի մասով «Ռիխտեր Լամբրոն»ՀՁ ՍՊԸ-ն ներկայացրել էին նախահաշվային գնից բարձր գնային առաջարկներ:

1.3 «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՊՁԲ-19/4» ծածկագրով գնանշման հարցման ձևով ընթացակարգի միաժամանակյա բանակցությունների նիստը տեղի ունեցավ 14.03.2019 թվականին ժամը 12:00-ին, ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության մասնաշենքում՝ ք.Երևան, Արշակունյաց-63 հասցեում: «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՊՁԲ-19/4» ծածկագրով գնանշման հարցման ձևով ընթացակարգի N24 չափաբաժնի մասով «Լեյկո» ՍՊԸ-ն առաջարկել է նոր նվազեցված գին, իսկ N59 չափաբաժնի մասով «Ռիխտեր Լամբրոն»ՀՁ ՍՊԸ-ն գնի նվազեցում չի կատարել, ուստի N 59 չափաբաժինը հայտարարել չկայացած.

Հ/հ	Գնման ապրանքի անվանումը	Գնման առարկայի նախահաշվային գինը (ՀՀ դրամ)	Առաջարկը ընդհանուր չափաբաժնի համար (ՀՀ դրամ)	
			«Ռիխտեր-Լամբրոն»ՀՁ ՍՊԸ	
			առանց ԱԱՀ	ներառյալ ԱԱՀ-ն
59	Վինպոցետին N06BX19	14320	14208.33	17050

Ստորև ներկայացվում է 14.03.2019թ.-ի ժամը 12:00-ին «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՊՁԲ-19/4» ծածկագրով գնման ընթացակարգի գների նվազեցման շուրջ բանակցությունների համար նվազեցված գնային առաջարկը՝ N24 չափաբաժնի մասով:

Հ/հ	Գնման ապրանքի անվանումը	Գնման առարկայի նախահաշվային գինը (ՀՀ դրամ)	Նվազեցված գնային առաջարկը ընդհանուր չափաբաժնի համար (ՀՀ դրամ)	
			«Լեյկո» ՍՊԸ	
			առանց ԱԱՀ	ներառյալ ԱԱՀ-ն
24	Ացետիլսալիցիլաթթու a01ad05,b01ac06, n02ba01	29500	24583.33	29500

2. ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կարիքների համար 2019թ.-ի ընթացքում դեղորայքի ձեռքբերման նպատակով, գնանշման հարցման միջոցով, էլեկտրոնային եղանակով կազմակերպած «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՊՁԲ-19/4» ծածկագրով ընթացակարգի N24 չափաբաժնի գնահատման արդյունքում հանձնաժողովը որոշեց՝

2.1 «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՊՁԲ-19/4» ծածկագրով գնման ընթացակարգի N24 չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Լեյկո» ՍՊԸ-ին, որի գնային առաջարկը չի գերազանցում այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները:

2.2 Ծանուցել «Լեյկո» ՍՊԸ-ին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել հրավերով սահմանված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

2.3 Հարցում չուղարկել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե, քանի որ «Լեյկո» ՍՊԸ-ն հանդիսանում է «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՊՁԲ-19/4» ծածկագրով գնման ընթացակարգի NN9,13,22,28 չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից, որի վերաբերյալ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե արդեն իսկ ներկայացվել է հարցում (Հավելված 8) առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև կարգով սահմանված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ, ուստի երկրորդ անգամ նշված հարցումը ներկայացնելու անհրաժեշտություն չկա:

2.4 «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՊՁԲ-19/4» ծածկագրով գնման ընթացակարգի հաջորդ նիստը հրավիրել ոչ ուշ, քան առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից, հրավերով նախատեսված՝ որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը հանձնաժողովի կողմից գնահատելու և ՊԵԿ-ի կողմից հարցման պատասխանը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրը, ժամը 11.00-ին, ՔԿ ծառայության մասնաշենքում, որը գտնվում է Արշակունյաց 63 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Հ.Գևորգյան

Գնահատող անդամներ

1 ---------- Հ. Հովհաննիսյան

2 ---------- Ա. Հակոբյան

Քարտուղար՝ ---------- Ն.Աբովյան